

ՔՍԱՆԻՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ



Տարեկան գինը 10 րուբլի կէս տարվան 6 րուբլ. Առանձին համարները 5 կոպէկով.

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ.

Մեր հասցէն. Тифлисъ, Редакція «Мшакъ», Կամ Tiflis, Rédaction «Mschak», Տէլէֆօն № 253.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ (բացի կիրակի եւ ժողովրդի օրերէն).

Յայտարարութիւնը ընդունվում է ամեն լիցուով.

Յայտարարութիւնները համար վճարում են իւրաքանչիւր տողատեղին 10 կոպէկ. Տէլէֆօն № 253.

ՀԻՄՆԱԳԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐՇՐՈՒՆԻ

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

Մ Ա Մ Ո Ւ Լ

Այս ամառ Շուշում հայ դերասանները, ինչպէս զիտեն մեր ընթերցողները, ներկայացուցաներ առին ժողովրդի համար «Բազմ» լրագրի թղթակիցը ախտաւում է. որ այդ ներկայացուցիչները քիչ էին, — ընդամենը հինգ հատ, — եւ այդ առիթով զանգատվում է, որ ժողովրդի կրթութեան համար համարեա ոչինչ զորք չէ կատարվում:

Այժմեան ժամանակ, երբ ամբողջ Ռուսաստանում կառուցվում են ժողովրդական տներ, ժողովրդական թատրոններ, գրադարան-ընթերցարաններ, լինում են դաստիարակչութիւններ, մեր քաղաքում գոյութիւն չունի նոյն իսկ մի հատ ժողովրդական դրամատիկական համար են բացված, օրինակ, քաղաքային երեք-դասարանական եւ մի քանի միջառնական եւ երկդասարան արական եւ իրական դպրոցները, բոլորովին չեն ծառայում ժողովրդի կարիքներին, որովհետեւ ժողովրդին անմատչելի վարձ են նշանակել ուսման համար Մի խօսքով, ամենքը աշխատում են մտանայ ժողովրդի հարցը եւ ամեն կերպ աջակցող են սնունդ նրան:

Շատ ճիշդ է նկատում թղթակիցը, որ ոչ ոք չէ ուզում իրան «ժողովրդ» անունով հասկացվող մարմինն պատկանող համարել Ով մի կտոր գրագիրութիւն է սովորում, ով հարիւր ու մի ծուռ ճանապարհներով մի կտոր հարստութեան տէր է դառնում, նա արդէն իրան ժողովրդի մարդ չէ համարում, այլ արևտուրան է ինքն իրան ձեւաչափում: Նոյն իսկ բուն ժողովրդին ծառայող պաշտօն ստանձնած մարդիկ էլ ամենից քիչ ժողովրդի մասին են մտածում: Օրինակ են բերվում գիւղական ժողովրդական ուսուցիչները: Գրանք ամառը թափվում են Շուշի եւ ներկայացնում են ժողովրդի ու կոկիկ հազմված չինովիներ, այնպէս են պահում իրանց, որ մարդիկ կարծեն, թէ շատ բարձր են, մի որ եւ զեպարտամենաւում են ծառայում: Եփվելով միշտ ժողովրդի հետ, սկսանառն լինելով ժողովրդի ցանկերին ու վշտերին, նրանք ոչինչ հոգացողութիւն չունեն այն բազմութեան մասին, որի կոպէկներով են իրանք զեպարտամենաւական ծառայողների հոյքը ցոյց տալիս:

Նրանք աշխատում են, ինչպէս էլ լինի, մի կերպ միայնակ իրանց որ եւ է արիտուկրատիական են հարուստ բանակի հետ եւ պատրաստ են փոխել իրանց ազնիւ պարտաւորութիւնները իրանց հարստութեան տունը: Նա հիմնովի է 1898 թուականին եւ այդ թուականից էլ սկսել է իր գործունէութիւնը: Նրա բուն նպատակն է ժամանակաւոր օգնութիւն հասցնել բանտից կամ հիւանդանոցից դուրս եկած անտուն-անտէր անհատներին, որոնք հարստութիւն չունեն իսկոյն աշխատանք սկսելու: Իսցի գրանքի նա օգնութեան ձեռք է մեկնում նաեւ ծայրահին աղքատութեան մէջ ընկածներին, մատակարարելով նրանց ապաստարան ու աշխատանք: Մի խօսքով, Թիֆլիսի «Աշխատութեան տունը» մի բարեկամատակ հիմնարկութիւն է, որ աշխատում է չքաւոր ազգաբնակիչները օգնութիւն հասցնել աշխատութեան միջոցով: 1900 թ. յունվարի 1-ը Թիֆլիսի «Աշխատութեան տան» մէջ աշխատել են ընդամենը 10,601 հոգի, որոնց վրա ծախսված է 1,437 րուբլի կամ իւրաքանչիւրի վրա միայն 13,6 կոպէկ:

Օգնութեան կարծա աշխատուորները 1900 թ. մինչեւ 1901 թ. յունվարի 1-ը այդ հիմնարկութեան մէջ անց են կացրել ընդամենը 8706 օր եւ ծախս են պատճառել ընդամենը 1175 րուբլի, այսինքն իւրաքանչիւր անհատի համար 13,5 կոպէկ միջին թուով: Վերջին տարվայ ընթացքում աշխատութեան մեջ օգնողներն ըստ ազգութեան բաժանվում են հետեւեալ ձևով:

Ռուսներ 45%

Երբեք չարթի, սեպտեմբերի 12-ին, վրաց դերասանական խումբը ազնուականների թատրոնում տուեց իր առաջին ներկայացումը Այդ երկու խումբում էին յայտնի ներկայացուցիչ Իւստին-Սուլթանովի «Старый Закалъ» գրաման, որը փոխադրել եւ յորմարեցրել է վրաց բեմի համար, տալով իր սովորական աստուղը, պ. Գունիան:

Սուլթանովի պիեսը վերին աստիճանի հետաքրքիր եւ գեղարուեստորէն գրած երկ է, բայց նա վրաց բեմի վրա, հարձիւ փոխադրողի, երեւում է անցոյն եւ կեղծ: Մի կողմ թողնելով պիեսի արժանաւորութիւնները եւ պակասութիւնները, կասեմք, որ խաղացին բաւական հարթ եւ բաւականութեամբ պատճառեցին սակաւաթիւ հասարակութեան: Դերասանները խաղի մասին մենք այս անգամ չենք խօսի:

ՎՐԱՑ ԹԱՍՐՈՆ

Նոյն գիշերը մեծ աջոցութեամբ խաղացին վրաց բեմի վրա առաջին անգամ մեր արգարք Գ. Սուլթանովի «Գիշերվան» սարը խէր է» կոմեդիան, որը մեծ բաւականութեամբ պատճառեց ներկայ եղող հասարակութեանը: Այդ գիշերվայ ներկայացումը հետաքրքրական էր եւ նրանով, որ առաջին անգամ բեմ էր դուրս դալիս ջահէլ, ինտելիգենտ օրիորդ Լէֆավան: Իր վայելչագէտ արտաքինով, ձայնով եւ ազատ

Վրացիներ 23 »
Հայեր 21 »
Գերմանացիներ 7 »
Լեհացիներ 3 »
Հրէաներ 1 »

Գալով այդ հիմնարկութեան մէջ գործադրվող արհեստներին, պէտք է նկատել, որ նրանք զեռ շատ միակողմանի ու աղքատիկ պատկեր են ներկայացնում: Դեռ չունեն այնպիսի կատարելագործված ձեւ ու կազմ, ինչպէս արտասահմանում: Այդտեղ կան միայն կար ու ձեւի եւ թղթեղէնի բաժանմունքներ:

Կար ու ձեւի բաժանմունքում պատրաստել են սպիտակեղէն ոչ միայն զանազան հիւանդանոցներ ու դպրոցներ, այլ եւ մասնաւոր մարդկանց ու վաճառատները համար: Այդ բաժանմունքի տարեկան ամբողջ եկամուտն է եղել 4580 ր. 75 կոպ:

Թղթեղէնի բաժանմունքում մի տարվայ ընթացքում պատրաստել են ընդամենը 300,000 ծրարներ եւ ուրիշ մանր ու խոշոր պարկեր: Ընդհանուր եկամուտը հասել է 1417 ր. 72 կ.:

Պարզ է, որ եթէ հասարակութիւնը աշակցէ այդ օգտակար հիմնարկութեան հոգաբարձութեանը, եթէ արժարձ է այդ ձեւով օգնութիւն հասցնելու զազափարք, այն ժամանակ Թիֆլիսի «Աշխատութեան տուն» էլ կը կարողանայ աւելի լայնացնել իր գործունէութեան ասպարէզը:

ՆԱԽՅՈՒՆ ՍԱՐԳՍԵԱՆ ԽՈՒՆՈՒՆՅԻ

Միջայլէ Ղուկասեան, Մարթա Բահաթրեան, Հոփսիսէ Սանդախտեան եւ ներսէս Գանդեգեան ցաւօք օրտի յայտնում են իրանց բարեկամներին եւ ծանօթներին՝ առաջին երկուքը՝ իրանց թանգագին քրոջ, իսկ երրորդը եւ չորրորդը՝ իրանց սիրելի սորաքրոջ՝

Ռուսները կազմակերպութիւն.—ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Մամուլ. Վրաց թատրոն. Նամակ երեւանից. Նամակ Խմբագրութեան. Ներքին լուրեր.—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Նամակներ Անգլիայից. Արտաքին լուրեր.—ՀԵՌԱԳԻՐՆԵՐ.—ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.—ԲԱՆԱՍԻՐԱՎԱՆ. Ցուցահանդէսը:

ՌԻՍԱՆԵԼԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹԻՒՆ

«Մշակի» անցեալ համարից մեր ընթերցողները տեղեկացան այն համակերպի կազմակերպութեան մասին, որ գոյութիւն ունի Քուլթայիս նահանգում: Այնտեղ հիմնված է եւ գործում է աջոցութեամբ մի ընկերակցութիւն, որ ունի մօտ 9000 անդամ: Այդ ընկերակցութեանը մասնակցում են ոչ միայն կալուածատէր եւ ունեւոր անձինք, այլ եւ հասարակ գիւղացիներ: Այդպիսի մի մասնակցութիւն նրա թական տեսակէտից դժուար չէ, որովհետեւ անդամավաճար շատ մասերի է, այն է՝ միայն տասն րուբլի:

Այդ ընկերակցութեան կանոնադրութիւնը, որ վերջնական խմբագրութեամբ հաստատվեց ներկայ տարվայ յունիսի 19-ին, իսկ հրատարակվեց միայն մի շաբաթ արանից առաջ, սեպտեմբերի 7-ին, Պետերբուրգում, տալիս է մեծ արտօնութիւններ այդ կազմակերպութեան: Ընկերակցութիւնը իրաւունք ունի փոխառութիւններ տալ իր անդամներին նրանց արգիւններին ապահովութեամբ եւ փոխառութիւններ անել նրանց համար: Նա յանձն է առնում որոշ պայմանով վերցնել իր անդամներին արգիւնները եւ նրանց

Բ Ա Ն Ա Ս Ի Ր Ա Կ Ա Ն

ՑՈՒՑԱՆԱԿԵՐ

Տնայնագործական բաժնի մի համեստ անկիւնում ի ցոյց են դրված զանազան տարազի ու մեծութեան սպիտակեղէն, թղթից չինած ծրարներ եւ այլն: Նրանք գրաւոր չեն իրանց սեպտով, հետաքրքիր չեն իրանց դասաւորութեամբ, բայց, այնու ամենայնիւ, արժանի են առանձին ուշադրութեան ու հետաքրքրութեան, որովհետեւ մի գաղափարական գործի արդիւնք են ներկայացնում:

Դրանք պատրաստված են Թիֆլիսի «Աշխատութեան տան» մէջ, որ իր տեսակի միակ հիմնարկութիւնն է ամբողջ Կովկասում:

Կարօտեալներին աշխատութեան միջոցով օգնութիւն հասցնելու մի նորութիւն է ոչ միայն Կովկասի, այլ եւ ամբողջ Ռուսաստանի համար: Ռուսաստանում միայն 1821 թուականին բացվեց առաջին «Աշխատութեան տունը» — Ինագանում: Յետոյ դրա օրինակին հետեւեցին Պետերբուրգը, Մոսկվան եւ ուրիշ քաղաքները:

Այդ բարեկամատակ գաղափարի առաջին քաղաքը եղաւ Բուկարէզը, որ մի շաբթ յօղուածներով աշխատում էր ցոյց տալ:

Թէ Ռուսաստանում բարեգործութիւնը նպատակաւորմար ձեւ եւ ուղղութիւն չունի, թէ անհրաժեշտ է կարօտեալներին օգնել ոչ թէ ողորմութիւն տալով, ոչ թէ ծուլութիւն ու ձրիակերութիւն ստորեցնելով, այլ ընական ճանապարհով, այսինքն օգնութեան փոխարէն աշխատանք առաջարկելով: Այդ ուղղութեամբ գրված նրա յօդուածները առանձին ուշադրութեան արժանացաւ մասնաւոր պրօֆէսոր Եմոլէրի «Jahrbuch für Gesetzgebung, Verwaltung und Volkswirtschaft im Deutschen Reich» 1886 թ. հրատարակածը:

Չանազան ձեւի աշխատութեան տները (Arbeitshaus) նախագայնց տարածված են քաղաքակիրթ երկիրներում—Պրանսիայում, Գերմանիայում, Եվէյցարիայում եւ այլն: Դրանց բոլորի հիմնական նպատակն է՝ անգործ աշխատուորներին պարագմունք տալ եւ անտուն-անտէր մուրացկաններին ապաստանել: Այդ գլխաւոր նպատակին շատ տեղիւմ միացրել են եւ ուրիշ երկրորդական նպատակներ: Այդպիսով աշխատութեան տների գործունէութեան ասպարէզը աւելի լայնացել է եւ նշանակութիւնը մեծացել:

Շատ հասկանալի է, որ այդպիսի հիմնարկութիւնները անազին կրթիչ նշանակութիւն կարող են ունենալ մասնաւոր Կովկասի նման յետամնաց երկրում: Ահա ճէնց այդ պատճառով հասարակութեան առանձին աշակցութեան արժանի է Թիֆլիսի նորա-

խաղով օրիորդը զբաւեց հասարակութեան ու...
չարտաբերութիւնը օրիորդը կունենայ մեծ ապա-
գայ, եթէ կարգին ուշադրութիւն դարձնեն նրա

Thaleia

ՆԱՄԱԿ ԵՐԾԻՒՆԻԾ

Սեպտեմբերի 8-ին

Պարզեան յարթանակը արարոււ: Այսօր ասացվեց մի նոր կօնդակ, որով թե-
մական դպրոցի ժամանակաւոր տեսուչ է նշա-
նակվում ուսուցիչներէր մէկը, կրօնի դասա-
տու Ս. Տէր-Գարբրէլեան, և յետ են ընդուն-
վում արձակված ուսուցիչները: Ընդամենը մի

Այդ գրութիւնը արժանացել է Վեհափառ
Կաթողիկոսի ուշադրութեան թէ ոչ, դարձեալ
չը գիտեմք: Բայց այս անգամվայ կօնդակի
հետ ուղարկվել էր Կարապետ վարդապետը, որ

Բայց բանն այն է, որ ինչպէս ասում
են, այդ ուսուցիչները չեն ուզում հրաժարվել
ուրեմն էլ միտանի «փօրթիթեան» քարի է դէմ
ասել:

Մինչդեռ մի կողմից այսքան հոգատարու-
թիւն կայ այդ եօթը ուսուցիչների վերաբեր-
մամբ, նոր հրաւիրված ուսուցիչների մասին
մտածող անգամ չը կայ:

Պարզեան եպիսկոպոսը խոստացաւ համոզել
երեք ուսուցիչներին հրաժարական տալու: Բայց
կասկածելի է դա:

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

Շուշի, սեպտեմբերի 2-ին

«Մշակ» 187-րդ համարում Շուշուց գետեղ-
ված էր մի նամակ, որի հեղինակը թագնված
է «Ա» տառի ներքոյ:

Նամակագիրը չէ զլացել իմ դէմ անուա-
նարկութիւններ, անտողի արախօսութիւններ
անկր ծն միայն այգաւոր կատմ, որ նամակի
մէջ իմ մասին բոլոր գրվածը օտաւ է և
զրպարտութիւն. գրածիս համար պատասխա-
նատու եմ խղճիս, հասարակաց և մամու-
լի դատաստանի առաջ, և որպէս զի ամեն
ինչ կանխիւ լինի, հրապարակով դիմում եմ
նամակագիր պարտնին, որ քաջութիւն է ունե-
ցել այդպէս զեղեցիկ կերպով ստեղծ և զըր-
պարտելու, մի և նոյն ժամանակ և իր անունն
ու ազգանունը չը յայտնելու, թող այժմ նոյն
քաջութեամբ, անուն-ազգանունով, հրապարակ
զայ, որպէս զի զրպարտվածը նարաւորու-
թիւն ունենայ պարտին ասածները ապացու-
ցանիլ տալու այնտեղ, որ պէտք է:

Լ. Աղախանեանց

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԻՆՐ

Սեպտեմբերի 17-ին թիֆլիս կը ժամանէ
հաղորդակցութեան ճանապարհների միութեան
Իշխան Սիլվիոյ:

Թիֆլիսում, չորեքշաբթի, սեպտեմբերի 12-ին,
եկան յորդ անձրեւներ, որոնցից մի փոքր
վնասով են ցուցանանդէսի մի քանի ստորակա-
նները: Յուշանանդէսի վարչութիւնը անմիջա-
պէս միջոցներ ձեռք առաւ զրոտելու շինու-
թեան այն մասերը, որոնք անձրեւներից վնաս-
վում են: Անձրեւի պատճառով այդ օրը ցու-
ցանանդէս այցելողների թիւը քիչ էր:

Մինիստրների խորհրդի Բարձրագոյն հաս-
տատված վճար գործութեամբ, որով իրաւունք
է տրվում կովկասեան պ. կառավարչապետին
որոշել այն ընտրողական շրջանների թիւը և
կազմը, որոնց մէջ պէտք է ձայնաւորներ
ընտրվեն Թիֆլիսի քաղաքային խորհրդի հա-
մար առաջկայ քառամեակի ընթացքում, պ.
կառավարչապետը անհրաժեշտ է համարել բա-
ժանել այդ նպատակով Թիֆլիս քաղաքը երեք
ընտրողական շրջանների: Առաջին ընտրողա-
կան շրջանը բաղկացած կը լինի 1, 2, 3 և
4-րդ քաղաքամասերից, երկրորդը—5, 6, և
7-րորդ քաղաքամասերից և երրորդը—8, 9
և 10-րորդ քաղաքամասերից:

Մարիս Ալեքսանդրովիա Կայսրուհու կոյրերի
հոգաբարձութեան կողմանան բաժանմունքը
միջնորդութիւն էր յարուցել այդ հոգաբարձու-
թեան կենտրոնական խորհրդի առաջ, որ մի
ակնարկումս իւրեր ուղարկվի Բազուի
նահանգի Գեօլգայ գաւառը: տեղական ազգա-
նակութեան ձիւրաբար բժշկական օգնութիւն
հասցնելու համար Հոգաբարձութեան կենտ-
րոնական խորհուրդը յարգել է կովկասեան
բաժանմունքի խնդիրը և այժմ իր հաշիւով
ուղարկում է յիշված գաւառը Սուչիին և
Լովկազով բժիշկներին մի ֆէլդշերի հետ, որ
տեղեակ է տեղական լեզուներին: Խուժար ճա-
նապարհ կընկնի ժող օրերուն Թիֆլիսից և
կը պիտ էր գործուհետեւելու սեպտեմբերի
20-ից: Խուժարը մնալու է Գեօլգայի գաւառում
երկու ամիս:

Այգեգործական համագործակցի խորհուրդը մը-
շակել է հետեւեալ ծրագիրը, որի համաձայն
պէտք է տեղի ունենան համագործակցի սէկցիա-
նների պարագայունները.—երէկ, սեպտեմբերի
13-ին, տեղի ունեցաւ պարտիզպանական սեկ-
ցիայի նիստը: Այսօր, սեպտեմբերի 14-ին,
վաղը 15-ին, և ապա 16-ին, նշանակված է
ուղևորութիւն դէպի Գուրտայի նահանգը և
Փորու գաւառը. 17-ին—առաւօտեան (ժամի
10-ին) 8-րորդ սէկցիայի նիստը: Վնասակար
միջատների դէմ մաքառելու հարցերը քննելու
համար և երեկոյեան պարտիզպանական ա-
ռաջին սէկցիայի նիստը: Սեպտեմբերի 18-ին,
առաւօտեան, նշանակված է 4-րորդ սէկցիայի
նիստը մեղուապահութեան վերաբերմամբ, ե-
րեկոյեան—8-րորդ սէկցիայի նիստը: Վնասա-
կար միջատների դէմ մաքառելու հարցեր-
ը քննութեան համար. սեպտեմբերի 10-ին,
առաւօտեան, այգեպահութեան և գինեգոր-
ծութեան 2-րորդ սէկցիայի նիստը, երե-
կոյեան մեղուապահական 4-րորդ սէկցիայի
նիստը. սեպտեմբերի 21-ին, առաւօտեան,—
չերամապահական 5-րդ սէկցիայի նիստը և
երեկոյեան—պարտիզպանական 1 սէկցիայի նի-
ստը. սեպտեմբերի 22-ին, առաւօտեան,—գի-
տութիւնների տարածման 7-րորդ սէկցիայի
նիստը. 23-ին, 24-ին, 25-ին և 26-ին—ուղև-
որութիւններ. 27-ին, առաւօտեան և երե-
կոյեան,—անտառաբուծութեան սէկցիայի նի-
ստերը, 28-ին, առաւօտեան,—չերամապահա-
կան սէկցիայի նիստը, երեկոյեան—8-րորդ սէկ-
ցիայի նիստը հողի բարւոքման վերաբերմամբ.
29-ին, առաւօտեան,—չերամապահական 5-րորդ
սէկցիայի նիստը, իսկ երեկոյեան—համագոր-
ծակցի խորհրդի նիստը:

Սեպտեմբերի 8-ին, երեկոյեան, ինչպէս հա-
ղորդում է «Рысь. Вѣд.» լրագիրը, Մոսկվա-
յում, օտար թղթակիցների դպրոցի դահլիճում,
տեղի ունեցաւ ինտերդինտ արհեստներ ու-
նեցող անձանց փոխադարձ օգնութեան ընկե-
րութեան ընդհանուր ժողովը,—որովհետեւ
վարչական կարգադրութեամբ փակվում է
այդ ընկերութիւնը: Նախագահի օգնական Գ.
Կրասնի պատմում, թէ ընկերութեան խորհուր-
դը ուստիկանութեան միջոցով ծանուցում
տրուցաւ ընկերութեան փակման մասին,

համաձայն ընկերութեան կանոնադրութեան
§ 54-ի. բացի դրանից սուտիկանութիւնը առա-
ջարկեց, ըստ կարելույն, չուտով հրահրել ըն-
կերութեան անդամների ընդհանուր ժողով լի-
վերացիայի համար. ընկերութեան բոլոր գոր-
ծերը, գրքերը և իրերը ցուցակագրված են և
կընքված, իսկ նրա գումարները սուտիկանու-
թիւնը վերցրեց և յանձնեց պետական գան-
ձարանին: Անդամներին մի քանիսի հարցին, թէ
ընկերութեան փակման պատճառը ինչը կարող
է լինել, նախագահի օգնականը պատասխանեց,
թէ այդ պատճառը խորհրդին յայտնի չէ,
իսկ ընկերութիւնը փակված է ընկերու-
թեան 54-ր յօդուածի հիման վրա, որով
նամանդապետներին իրաւունք է տրված ի-
րանց իշխանութեամբ փակել գանձարան մաս-
նաւոր ընկերութիւններ, կտուրներ և այլն, ե-
թէ նրանց մէջ նկատվում է որ և է բան, որ
հակառակ է պետական կարգին և և սասարա-
կական ապահովութեան ու բարոյականու-
թեան: Վերաբանութիւններից յետոյ, ընկերու-
թեան անդամներին ցանկութեան համաձայն,
քուէարկութեան ենթարկվեց հետեւեալ առա-
ջարկութիւնը.—ընկերութեան 54-ր յօդուա-
ծում նախատեսված առիթների բացակայու-
թեան պատճառով, բողոքել օրինական կար-
գով վարչութեան կարգադրութեան դէմ: Այդ
առաջարկութիւնն ընդունվեց 128 ձայնով 1-ի
դէմ: Կառավարչական սենատին գանձարան ներ-
կայացնելու գործը յանձնվեց ընկերութեան
խորհրդին:

Պրասպովի համալսարանը, որը սօնում է
այժմ իր գոյութեան 450-ամեայ յօբելանսը,
Պրասպովի համալսարանի դոկտորներ ընտրեց
ուսանց երկու գիտնականներին, որոնք մաս-
նակցում են յօբելանսական հանդէսներին, այն
է՝ ակադեմիկոս և գիւնտրական բժշկական ա-
կադեմիայի պրօֆէսոր Ն. Գ. Երօբովին և
նոյն ակադեմիայի պրօֆէսոր Կ. Գ. Խորուչ-
չովին:

ՎԱՐՇԱՎԱՅԻՑ մեղ գրում են. «Տեղիս հայ
ուսանողութիւնը մեծացաւ մի քանի նոր ան-
դամներով: Պօլտանիքական դպրոցում աջող-
քնութիւն տուին և ընդունվեցին կովկասից
հինգ հայ երիտասարդներ: Ցանկալի է, որ
գտնէ այժմ Վարշաւայի հայ ուսանողութիւնը
իրան պաշտաւոր տեղ գրաւէ, օրինակ դարձ-
նելով Ռուսաստանի ուրիշ համալսարանական
քաղաքների հայրենակից ուսանողների ընտիր
կողմերը»:

ՎԱՐՇԱՎԱՅԻՑ մեղ գրում են. «Միթիթա-
րեան միաբանութեան յօբելանսը ունեցաւ իր
համակողմնորդ և վարչակազմ. պ. Ս. Մ.-ի
առաջարկութեամբ տեղիս հայ դաշխականու-
թիւնը ուղղեց օգոստոսի 26-ին միաբանու-
թեան անունով հետեւեալ չորհուրդական հե-
ռագիրը. «Լեհաստանի մարաքաղաքի սակա-
ւաթիւ հայ դաշխութիւն, միանալով այսօր հա-
մագային մեծ հանդիսին, իր արտագին ողջոյն-
ներն է ուղարկում Վենետիկի Միթիթարեան-
ներին, նրանց վստասակար զործուհետեւելու
երկուհարկուրումնալի առիթով թող միայն
սօնը ապագայի համար էլ յայտնվի իրեն մի
չքեղ գրաւական հարկոված և թշուառ ազգի
օգտին ծառայեցնելով միաբանութեան յետա-
գայ սերնդի մտաւոր և բարոյական ոյժերը»:
Հաճելի է աւելացնել, որ հեռագիր ստորա-
գրողները, որքան մեղ յայտնի է, չը բաւակա-
նանալով իրանց յարգանքների այլպիսի պաշ-
տօնական արտայայտութեամբ, որոշել են այդ
առիթով մի գումար հանգանակել: յատկացնե-
լով նրա գործադրութիւնը որ և է բարեգոր-
ծական նպատակով»:

ԲԱՊՏԻՑ մեղ գրում են. «Գողբիթ, թափա-
ռայիկ սրկիաների և մարդասպանների թիւը
օրից օր աւելանում է: Հէնց այսօր, սեպ-
տեմբերի 7-ին, դեռ լոյսը չը բացված, մի քա-
նի գողեր մտնում են Ջահանգիր անունով մի
չամախեցու բնակարանը, որ գտնվում է Չեամ-
բարա-քեանդ թաղում: Գողբից մէկը մը-
նում է սենեակ, որպէս զի իրեղէններ ժողո-
վէ, բայց նոյն րօպէին անդէս տանտէր հայը
հետեւից գրկում է աւազակին, որպէս զի ոտ-
քերը և ձեռքերը կապուէ: Գողբաբար,
նոյն ժամին աւազակի ընկերները մէկը ձեռ-
քի բէբութով մի քանի հարուած է հասցնում
Ջահանգիրին, որը կէս ժամից յետոյ վախճան-
վում է: Աւազակները անյայտ են»:

ՇԻՐԱԿԻՑ մեղ գրում են. «Շիրակում երկ-
րագործները աւարտեցին իրանց հաց կայսեր:

մնացել է մի փոքր մասը, այն էլ մի շաքա-
թից կաւարտեն: Հացահատիկը բաւարար է,
գնները չեն բարձրացել, լաւ գործնի սօմալը
(18 ալուէ) ծախվում է 16—17 ռուբլով, գարին՝
սօմալը 7 ր. 50 կ., կտաւատը՝ սօմալը 18
րուբլի: Այս տարի բաւական հացի դէզեր
հրդենցեցին, իսկ Բայ-Շորագեալում գրեթէ ամեն
օր վառում էին հարուանի ունեցածը հրդեն-
լը շարագործների համար դարձել է խաղալիք.
մի օրում լոյս ցերեկով հրդենը են 200 սալլ
հացի վնասները ապագին են»:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿՆԵՐ ԱՆԳԼԻԱՅԻՑ
Պրասպովի միջազգային ցուցանանդէսը
II

Պատաղութեան կօնդէտը, ինչպէս ասացի,
բացվեց սեպտեմբերի 9-ին (ն. ա.): Այս անգամ
էլ, ինչպէս անցեալ տարի Պա-
րիզում, երկրագնդի գանազան ծայրերից պատ-
գամաւորները մեծ թւով եկել են, չը նայելով
տեղի հետաւորութեան հօնգէտը բացվելուց
3 օր առաջ, Պրասպովի բոլոր եկեղեցիներում,
փողոցներում, ժողովարաններում քաղաքից
կարդայվեցին, միտինգներ կազմակերպվեցին
և առնանարանութիւններ եղան խաղաղութեան
մասին:

Մասնաւոր, կիրակի օր, սեպտեմբերի 8-ին,
մենք, բոլոր օտարականներս, ականատես էինք
մի ասորիանակ տեսարանի. բոլոր փողոցները
գառարկ էին, բոլոր խանութները գոց էին,
փակ էր նոյն իսկ ցուցանանդէտը, ոչ մի կառք,
ոչ մի ձիաքարչ կամ էլ ընտրական արածվայ
չէր գործում. հիւրանոցները փակ էին և ամ-
բողջ օր մենք չը կարողացանք ոչ մի տեղ
ուտելիք գտնել: Բոլոր քաղաքայինը—մարդ,
կին, երեխայ,—հաւաքվել էին եկեղեցիներում
և ժողովարաններում ու ամեն տեղ լավում էր
երգ, շաքական, տաւաղարկութիւն ու պիսա-
կա» (peace)—խաղաղութիւն խօսքերով
կէտրից յետոյ, մինչև երեկոյեան ժամը 10-ը,
ահագին համախմբումներ էին տեսնում իրա-
պարակներում և ուղղակի փողոցների մէջ,
ատնաբանութիւններ, կրգեր, նուագածու-
թիւն,—բոլորը վերաբերեալ «peace»-ին: Գա-
ղաքն այդպիսով նախատօնակ էր կատարում
և պարտաւարտվում խաղաղութեան կօնգրէտի
բացման:

Մի այլ ասորիանակութիւն ևս այն էր, որ
ամբողջ քաղաքում, ոչ մի հիւրանոցում, ոչ
մի տեղում մենք չէինք նկատում ճաշի, ընթ-
րիքի ժամանակ և մինչև այսօր էլ չենք տես-
նում զիտու, օղիի և առնասարակ ոգիլից ըմ-
պելիքների նշուլ: Այստեղ բոլոր հիւրանոցները
«Temperance Hotels» (ժուժկալութեան հիւ-
րանոցներ) են: Շօտլանդացիները, իբրեւ պու-
րիտաններ, կովկասներ և մաքրակենցաղ
քրիստոնեաներ, հալածու են ոգիլից ըմպելի-
քը: Այդ սովորութիւնը օրէնք է դարձած, այն-
պէս որ նոյն իսկ լօրդ-մէրի՝ կօնգրէտի ան-
դամներին արած ընդունելութեան են խնջւթի
ժամանակ, սեղանի վրա ոչ միայն գինի, ոչ
միայն շամպայն չը կար, այլ նոյն իսկ դարե-
լուր չը կար: Պարզ ջուր, լիճօնաղ, թէյ—անհ
ինչ որ տալիս են նոյն իսկ պաշտօնական ճա-
շերի ժամանակ: Այդպէս էր և այն մեծ ճաշ-
կէտի ժամանակ, որ Պրասպով քաղաքը երէկ
տուեց ի պատիւ յայտնի միլիարդատէր կար-
նէլլիթի, որին մատուցանում էր Պրասպովի քա-
ղաքացիութեան դիպլոմ նրա նուիրած ահա-
գին գումարների համար: Այդ բանկէտին մաս-
նակցում էին Լօնդօնից եկած միլիարդներ,
պարլամենտի անդամներ, բայց սեղանի վրա,
կենացների ժամանակ, բաժակների մէջ փայ-
լում էր միայն վճիտ ջուրը: Նոյն իսկ կինդի
(թագաւորի), էլուրար VII-ի համար չօտլան-
դացիները զիջումն չի անի Նոյնը տեղի ունեցաւ
և Պէտի քաղաքում, որի խորհրդարանը նոյն-
պէս մի մեծ բանկէտ տուեց ի պատիւ կօնգր-
րէտի անդամների: Շօտլանդացիների այս ժուժ-
կալութիւնը օրքան և գովելի է: Բայց այնու-
ամենայնիւ 80-ամեայ ծերունի Պրեզիդենտ Պա-
րսին, խաղաղութեան շարժման մեծ ախոյանը
և Փրանսիայի Պրասպովը, ինչպէս սովորա-
բար կոչում են նրան, ծիծաղելով ասաց լօրդ-
քաղաքացիներին. «Լօրդ-մէր, դովում եմ շո-
տլանդացիներին ժուժկալութիւնը, բայց, կար-
ծում եմ, մի կէս բաժակ կարմիր գինի կարող
էր կազդուրել ծերունուս պատոված ոյժերը:
Լօրդ-մէրը ժպտաց և այնու ամենայնիւ ան-
կարող եղաւ խախտել աւանդական սովորու-
թիւնը: Կօնգրէտի գերմանացի անդամները կա-
տարեալ յուսահատութեան մէջ էին. ուր մըտ-

գրում են. «Միթիթարեան միաբանութեան յօբելանսը ունեցաւ իր համակողմնորդ և վարչակազմ. պ. Ս. Մ.-ի առաջարկութեամբ տեղիս հայ դաշխականութիւնը ուղղեց օգոստոսի 26-ին միաբանութեան անունով հետեւեալ չորհուրդական հեռագիրը. «Լեհաստանի մարաքաղաքի սակաւաթիւ հայ դաշխութիւն, միանալով այսօր համագային մեծ հանդիսին, իր արտագին ողջոյններն է ուղարկում Վենետիկի Միթիթարեաններին, նրանց վստասակար զործուհետեւելու երկուհարկուրումնալի առիթով թող միայն սօնը ապագայի համար էլ յայտնվի իրեն մի չքեղ գրաւական հարկոված և թշուառ ազգի օգտին ծառայեցնելով միաբանութեան յետագայ սերնդի մտաւոր և բարոյական ոյժերը»: Հաճելի է աւելացնել, որ հեռագիր ստորագրողները, որքան մեղ յայտնի է, չը բաւականանալով իրանց յարգանքների այլպիսի պատշտօնական արտայայտութեամբ, որոշել են այդ առիթով մի գումար հանգանակել: յատկացնելով նրա գործադրութիւնը որ և է բարեգործական նպատակով»:

կան պատանի «Baiera» շոգենառով ճանապարհ է ընկնում Գեորգիայի ուղղակի դեպի Չինաստան: Այսպիսով ուղեորութիւնը դեպի Ամերիկա տեղի չի ունենայ:

ՆԱԳՈՂ: Նուաճանգատում աշխատող բնույթային մէջ, որոնք չիտումն էին ունեցել ժանտախտի վերաբրմամբ անբարեյաջող տեղերից ստացված առարկաների նետ, երկուշաբթի եւ երեքշաբթի օրերը հիւանդութեան 12 դէպքեր պատահելին, որոնք նման են ժանտախտի Անհրաժեշտ միջոցները իսկոյն ձեռք առնվելին: Գաղաթի մէջ հիւանդութեան դէպքեր տեղի չեն ունեցել:

ԸՆԴՊՈՆ: Անգլիական զինուորական միւնիստրութեան խուզարկու առնանք մտադիր է ուղարկել Չինաստանի զանազան շրջանները արշաւախմբեր, մայրօր Մանիֆօրգի արշաւախմբի նման, որ քիչ առաջ ճանապարհ ընկաւ Պեկինից, որովհետեւ 1901 թուականի պատերազմը ցոյց տուց, որ անգլիացիների խուզարկական մասը աւելի ստոր էր ուսուակներից եւ հասցունակներից: Չինուորական միւնիստրութիւնը մտադիր է նախագատարատվել, յամենայն դէպս, ապագայի համար եւ ձեռնարկում է այդ միջոցը, կամենալով հետաես լինել:

ԽՈՐԱԳԻՐ ԱՆԻՔՍԱՆԴԻ ԳԱՆԱՆԹԱՐ
Հրատարակիչներ՝ ԹԱԳՈՒՂԻ ՏԻԳՐԱՆԵԱՆ
ԻՍԱՀԱԿ ՄԷԼԻՔ-ԱՂԱՄԱԿԱՆ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱՌՈՐ ՀԻՒԱՆԳԱՆՑ

Բ. ՆԱԿԱՍԱՐԳԻՆԵԱՆԻ

(Կուկիա, Վործնոցի արձանի հանդէպ)

- ա մ ե ե օ ր, բ ա յ ք Կ ի ւ ա Կ ի օ ր Ե Ր Ի ց: Ա Ռ Ա Ռ Ց Ն Ե Ր Ը
- Բ. Ա. Նաւասարգիան—11—12 ժ. վերաբուժութեան, վնասակալ (սիֆիլիս) և միգրան. հիւանդ.
- Կ. Մ. Չիկոլանի—9—10 ժ. աչքի, ներքին և ներքալին 5.
- Կ. Բ. Գեղիկով—12—1 ժ. սկանչի, քթի և կուկրի 5.
- Զ. Բ. Բարսեղեանց—11—12 ժ. կանանց և երեխայոց հիւանդ.
- Ս. Պ. Կարապետեանց—1—1/2 ժ. ներքին և երեխայոց 5.
- Ե Ր Ե Կ Ո Ց Ն Ե Ր Ը
- Կ. Ն. Ուսումնարան—6—7 ժ. վերաբուժութեան և մորթու 5.
- Բ. Բ. Գեղիկով—7—8 ժ. սկանչի, քթի և կուկրի 5.
- Բ. Ա. Նաւասարգիան—7—8 ժ. Վարձ 50 կ. չքաւորները ձիւ համախորհրդի (կոնսիլիումի) և օպերացիայի համար առանձին:
- Փ. Ց. Առվանիակի—տանը, ծաղկահատ և բժշկական մարմնամարզ. դիմել 11—1 ժ.

Հիւանդանոցի վերահստուչ
Բժօկապետ ՆԱԿԱՍԱՐԳԻՆԵԱՆ

Աշակերտութիւնների ընդունելութիւնը ամենամյս օր, ժամը 9-ից—2-ը:
Հասցէն՝ Թիֆլիս, Մոզու եկեղեցու հանդէպ, № 13. 8—8

Պետերբուրգի բժշկական վարչութեան թոյլատրութեամբ: Մեծ արկղիկը 5 բուրբի, փոքրը—3 բ. եւ 1 բ. 50 կ.:



ՄԻՓԼԻՑԻՆ
ՆՈՐ ՄԻՋՈՑ

Մազերը բուսցնելու եւ ամրացնելու համար, ոչնչացնում է թեփը: Դուրս է եկել նաեւ բուրբոյին նոր միջոց

ՁՈՒՒ ԿԱՔԸ

Երեւոյն քնքշութիւն եւ սպիտակութիւն տալու համար, ոչնչացնում է արեւի պատճառած սեւութիւնը, մոռնիկը, տալիս է կաշուին քնքշութիւն եւ սպիտակութիւն: Այդ գնները չափաւոր են. մեծ արուակը, արկղիկի մէջ, 2 բուրբի, փոքրը—1 բ. 50 կ. Մարվում են բոլոր պարֆիւմերական եւ զերգիւմաւական խանութներում: Գլխաւոր պահեստը գտնվում է Պետերբուրգում, Պուշկինսկայա փողոց ա. № 15, բնակարանի № 12. պահեստի բաժանմունքները գտնվում են. Թիֆլիսում կովկասեան դեղատան սպարանքների վաճառման ընկերութեան խանութում: Երեւանեան հրապարակ եւ նրա բաժանմունքում, Միջայլիան փողոց եւ Բագուում. նաեւ Միջայլիան կամուրջի վրա, Պապովի եւ Արխանգելովի դեղատներում: Օտարաքաղաքացիների պատուէրները կատարվում են անիֆլապէս՝ պատուով: 75—100

ԿԱՐ ՈՒ ՁԵՒԻ
Գ Պ Ր Ո Ց
ՕՐ. Ն. Գ. ՇԱՀՈՒՄԵԱՆԻ
տեղափոխվել է՝ Бобутовская ул., Арсеньевский тупикъ, домъ князя Эристовъ.
Ընդունելութիւնը շարունակվում է:
1—3

ՄԻ ՀԱՅՈՒՂԻ
որ դիտել հայերէն, ուսուցչի եւ ֆրանսերէն լեզուները, կամենում է սնային վարժուժու պաշտօն ստանալ: 7—9 տարեկան փոքրահասակ մէկ կամ երկու աղջիկների նետ պարագիւրու համար: Կը կամենար նաեւ կօժակներու կամ լինել մի տիկնոջ:
Հասցէն՝ Большая Водовозная ул., домъ Сергѣева, № 23, спросить во дворѣ.
2—3

ՆՈՐՈԳՈՒՄ ԵՄ
Ա Մ Ե Ն Ա Է Ժ Ա Ն Գ Ն Ո Վ
ցիցը կերած, այրված եւ փտած գորգեր, կապերաներ, ձնձեր...
Ад. Тифлисъ, 7-й ул., Ахметская ул., д. № 43, Пепела Паремузова
2—3

Հարկատր Ե մի ուսուցչի Վերին Աղաւթի ուսումնարանի համար: Ցանկալի է, որ գիտենայ նաեւ պարտիզպանութիւն, չերամպաճութիւն եւ մեղուապահութիւն: Պայմանների համար կարող են դիմել երզնէայ հուստարմատար Ստան Յարութիւնեանցին, Բագու, Պարագեա, ա. Աղաւթեանցի:
2—3

ԹԻՖԼԻՍԻ ԲԱՂԱԲԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆԸ
արանով յայտարարում է, թէ նրա դիւանատան մէջ, այս սեպտեմբեր ամսի 15-ին, ցերեկվայ ժամի 12-ին, նշանակված է անուրը՝ կապալով աւուր. Մոզնի փողոցը քարայտակելու աշխատանքը, սկսած Բրէժնոյցայեա փողոցից մինչեւ Վարվարի-Սէյի ձորակը, 156,4 սաժէն երկարութեամբ, 4 սաժէն լայնութեամբ եւ 625,6 քառակուսի սաժէն տարածութեամբ, նոյնպէս եւ հողային աշխատանքներ 183 խորանոց սաժէն քանակութեամբ, — բոլորը 2252 բ. 26 կօպէկ գումարի: Աճուրդի մասնակցի ցանկացողները կարող են տեսնել պայմանագիրը Ուարվայի շինարարական բաժանմունքում բոլոր լի օրերը, ժամի 9-ից մինչեւ 3-ը:
3—3

Հ Ա Ր Կ Ա Ի Ո Ր Է
ՄԷԿ ՏՆԱՅԻՆ ՎԱՐՇՈՒՅԻ
Չարջուում (Закасп. край) մի ընտանիքում երեխաների նետ պարագիւրու համար՝ հայերէնից եւ աւսերէնից: Ցանկացողները պայմանների մասին կարող են դիմել՝ Թիֆլիս, դրախանութ «Գուստաներգ» (Լորիս-Մէլիքեան փողոց № 11) Գալստեանին:
6—6

Հ յ յ Ս Տ Ե Ս Ա Ն
ԲՃԵԿԱԳԵՏ ԱՐՄՈՒՆՈՒ
Մ Ի Թ Մ Ի Ր
2-դ տպագրութեամբ: (3 պատկ.)
Գինն է 5 կ.
Դիմել՝ Книжный магазинъ Гуттенбергъ, Կենտրոնական գրավաճառանոց եւ հեղինակի մօտ. Д-ру В. Арцруни. 6—10

ՑԷՆՁԱՒՈՐ ՈՒՍՈՒՑԻՉ
Քաղաքային երկրասեան դպրոցի ուսուցչի եւ գրիմադիայի հայոց լեզուի ուսուցչի Իրաւունքներով: Տալիս է մասնաւոր դասեր հայոց եւ աուսաց լեզուներից եւ թուրքարտութիւնից: Ցանկութիւն ունի ծառայել նաեւ հայոց դպրոցներում:
Հասցէն՝ Тифлисъ, Троицкая улица, домъ № 11, вв. Мелкумова. 4—5

Ս. Տ. ՎԱՍԻԼԵՎԻ
ՁՈՒԹԱԿԻ ՄԱՍՆԱՌՈՐ ԿՈՒՐՍԵՐ
Պարագուժները սկսվում են սեպտեմբերի 1-ից: Վարձը ամբողջ ուսումնական տարվայ համար—80 բուրբի: Վարձը կիսամեակներով: Ընդունելութիւնը ամենամյս օր, ժամի 10-ից մինչեւ 5-ը եւ 5-ից մինչեւ 7-ը: Грибоѣдовская, № 5:
10—11

ԹԻՖԼԻՍԻ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԳՐԱՎԱՃԱՌԱՆՈՑՈՒՄ
վաճառվում են հետեւեալ հայերէն նոր գրքերը:
Փ ա փ ա զ Ե ա ն Վ., Պատմութիւնը, Թիֆլիս, 1901 թ. գ. 50 կ.
Շ ի ր վ ա ն զ ա զ է, Նամու, բ. տիպ. Թիֆլիս, 1901 թ. 1 բ.
Բ ու զ ու զ Ե ա ն Ա. բժ., 1) Մարմնամարզութիւն 25 վառկերով—20 կ., 2) Մանկավարժական համառոտ գրոյցներ—15 կ., 3) Ժառանգականութիւն եւ դատարարականութիւն—15 կ., 4) Ով է յանցաւորը—15 կ., 5) Ասող հոգին ասող մարմնի մէջ—10 կ., 6) Գեղձախա (գոյտուխա)—10 կ., 8) Մեր նեարդերը—10 կ. եւ 9) Վնեւրական արտեր—5 կօպ.
Ա թ ը Ր Ո Ւ Ն Ի Վ ա Ն. բ ժ., 1) Մի խմբի, բ. տիպ, նկարներով—5 կօպ., 2) Վատ ցաւ, նկարներով—6 կ. եւ 3) Ամուսնութիւն, ասողապահական էտիւդ—75 կ.
Տ է Ր-Յ Ո Վ Է ա ն ն ի ս ե ա ն պ. ք ա Ն., 1) Աստուծոյ տաճարը—8 կ., 2) Քանաւայ—15 կ. եւ 3) Եկեղեցական սուրբ պատկերներ—5 կ.
Փ ա ն ն ա ն ց Խ ա Ն. ք ա Ն., Մարդկային կեանքի վախճանական նպատակը. Վաղարշապատ 1901 թ., գ. 15 կ.
Ա յ վ ա զ Ե ա ն Բ., 1) Հիւսիսի արժիքը, պատմական վէպ, Թիֆլ. 1901 թ. գ. 1 բ., 2) Աշոտ Երկաթ, պատմական վէպ, բ. տիպ, գ. 1 բ.
Ս ա Ր Գ Ս Ե ա ն Լ., Հին ցաւ (հրապարակախօսական խոսքեր), Մօսկվա, 1900 թ. գ. 30 կ.
Ղ ա զ ա Ր Ե ա ն Յ ա Ն. 1) Հա վայլա, փոք. 1 արար. 2) Կրթութիւնը խաթայ չէ, կատակերգ. 1 արար., Թիֆլ. 1901 թ. գ. 15 կ.
Վ ն ն Ե տ ի կ ի Մ ի ա բ ա ն ռ Ե թ ի ւ Ն, Գեղունի. պատկերազարդ գեղարուեստական հրատարակութիւն, Վնեւրիկ 1901 թ. գ. 1 բ.
Դիմել՝ Тифлисъ, Въ Центральную Книжную Торговлю. (ո.) 1—4

Շ Ղ Թ Ա Յ
Ղաւթարդիւնաբերական Ընկերութեան վարչութիւնը յայտնում է ի դիտութիւն պ.պ. բաժնետէրերի, որ երրորդ 1000-ի վճարը, այնչէն իւրաքանչիւր փային 10 բուրբի, նշանակված է սոյն սեպտեմբերի 14-ից մինչեւ 22-ը ներփակված:
Բաժնետէրերը վճարման ժամանակ պէտք է ներկայանան բաժնետուները: Նաեւ յիշենում է Ընկերութեան պայմանագրի 7-րդ յօդուածը:
Ընկերութեան գրասենակը, Երեւանեան հրապարակ, տուն Պարագեանի (4, 11, 14, 17, 21).
3—5

ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ԿՈՒՐՍԵՐ
Ե Ր Կ Ո Ւ Ս Ե Ռ Ի Ա Ն Չ Ա Ն Ց Հ Ա Մ Ա Ր
ՏԱՍՆԻՆՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ
Աւետարական Կուրսերի նպատակն է՝ մասնագիտական առեւտրական կրթութիւն տալ երկու սեռի անձանց և պատրաստել գործնական ճանապարհով հետո հաշուապետներ: Աւարտողները ստանում են ա տ ա ե կ ս տ ա տ ն Ե Ր:
Աւանդելի աւարկայք սրանք են՝ 1) Աւետարական Տնտեսութիւն, 2) Աւետարական Քառասունութիւն, 3) Հաշուապետութիւն (պարզ, կրկնակի և բանկային), 4) Թուրքարտութիւն համարի վրա, 5) Աւետարական թղթակցութիւն, 6) Աւետարական և մտերակ կանոնադրութիւն և 7) Գեղազրութիւն, վատ ձեռքի ուղղելը:
Աւարտը սկսվելու է սեպտեմբերի 15-ից: Ընդունելութիւնը սեպտեմբերի 1-ից, ամենամյս օր, առաւօտեան 10-ից մինչեւ 11-ը, և երեկոյան 4-ից մինչեւ 8 ժամը, կարճեր հիմնով բնակարանում, Սօրթակում, Ալեքսանդր Փրիլոնովի տանը № 9, Սերգիեյեւկայա և Լեբեժնովկայա փողոցների անկիւնում: Մտադիր և կանօնները կարելի է ստանալ ձ թ ի ա պ է ս Ե Ր. Մօսկվայի բանկային գրասենակում և կուրսեր հիմնով ռուսկարանում: Օտարաքաղաքացիք դիմում են՝ Тифлисъ, С. П. Мануэльяну. (Ն. Ս.) 25—25

Պատիւ ունեմ յայտնելու յարգելի Հասարակութեան եւ վաճառականներին,
որ այս տարի ստացել ենք մեծ քանակութեամբ
Ա Մ Ե Ր Ի Կ Ա Կ Ա Ն Բ Է Չ Ի Ն Է Կ Ա Լ Օ Շ Ն Ե Ր
ամեն տեսակ, աղամարդկանց, կանանց և երեխաների: Ուստի խնդրում եմ յարգելի անողներին դիմել մեզ, ուր կը ստանան նոր ապրանք: Մեծ քանակութեամբ գնողներին կը լինի բաւական զիջում: Նոյնպէս ստացել ենք ՊՐՎՕԻՆԻԿ կոչված ԿԱԼՕՇՆԵՐ, ամեն տեսակի Պատուէրները կը կատարվեն անմիջապէս, նայած պայմաններին: Մեզ մօտ ծախվում են նոյնպէս կօշիկներ փափկացնող իւրիւր եւ փայլ աւուրող գունաւոր գլխաւորներ: Նոյնպէս ծախվում են արտասանմանի եւ Թուսաստանի ամեն տեսակ կաշուեղէն ապրանքներ և կօշիկարկան ամեն տեսակ գործիքներ:
Մեր Հասցէն. Тифлисъ, Армянскій базаръ, Братья Яргуловы.
Բաժանմունքը. Баку, Губернская ул., Т. Яргулянцъ.
(2. 4.) 10—20

Կ Օ Ն Ֆ Ե Մ Ի Ե Լ Շ Օ Կ Օ Ղ Պ Պ Ի
Գ Ո Ր Ժ Ա Ր Ա Ն
„Փ. Ն. ՓՐԻՒՄԵՆԱՆ“
ԹԻՖԼԻՍՈՒՄ



Առաջարկում է թարմ կարամէլ մրգեղէնից, մօնպանսէ, մարմէլաղ, պատտիլա, զէֆիր եւ այլն:
Պատուէրներով դիմել գործարան. Պավլովկայա փողոց, սեփական տուն, տէլեֆօն № 362.
Սեփական գործարանական խանութը գտնվում է Մէյզանում, Եղը. Հէջուրեանների տանը, տէլեֆօն № 772.
Մեր ապրանքները ծախվում են բոլոր կօյօնիական խանութներում:
Բագուի եւ Բագուի գաւառի համար ներկայացուցիչ է Նիկ. Սամարչեանց, Միջայլիան փող., ա. Աշումեանի:
53—100